ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, քննելով «Շինկո» ՍՊԸ-ի կողմից 22.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/44 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Շինկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Շինկո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերությունը) Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.03.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ 15.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ հաստատվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը, որը 12.01.2018թ. հրապարակվել է տեղեկագրում:

Ընկերությունը հայտնել է, որ Հրավերի 7.1. կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի

Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին...:

Ընկերությունը նշել է, որ այնուհետև 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հրավերի տեքստում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ մեջբերում. «Փոփոխության առաջացման պատճառ N 1՝

• Հրավերի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով նախատեսվել է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

Փոփոխության նկարագրություն-հրավերում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի և պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին»:

Ընկերությունը հայտնել է, որ նշված փոփոխությունը 30.01.2018թ. սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում:

30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ հաստատվել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ընթացակարգի հրավերի տեքստը, որը հրապարակվել է 12.01.2018թ.:

Հրավերի 7.1. կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ընկերությունը հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Շինկո» ՍՊԸ-ն, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ-ն և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ն (համատեղությամբ):

Կոնսորցիումը 5-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է 301.464.960 << դրամ գնային առաջարկ, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ 276.372.960 << դրամ գնային առաջարկ:

«Շինկո» ՍՊԸ-ն հրավերով սահմանված հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով վճարել է «900008000474» գանձապետական հաշվին:

Նույն չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լիլիթ-87» ՍՊԸ-ն, որը 5-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է 310,622,700 ՀՀ դրամ գնային առաջարկ, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ 282 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:

Գնահատող հանձնաժողովի 16.03.2018թ. N 3 Արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ կոնսորցիումի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Նույն արձանագրության 3.2-րդ կետի համաձայն կոնսորցիումի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Որպես մերժման հիմք նշված է՝ մեջբերում. ««Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պայմաններին, այն է՝ հրավերի 7-րդ կետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, սակայն մասնակցի կողմից այն փոխանցվել է որպես պայմանագրի ապահովում և փոխանցվել է «900008000474» գանձապետական հաշվին»:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լիլիթ-87» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի 16.03.2018թ. N 3 Արձանագրությունը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով բաց մրցույթի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված պահանջների խախտմամբ, հետևաբար այն ենթակա է փոփոխման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հրավերի տեքստում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ մեջբերում. «Փոփոխության առաջացման պատճառ N 1

- Հրավերի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով նախատեսվել է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին

Փոփոխության նկարագրություն—հրավերում կատարվել է հետևյալ փոփոխությունը:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի և պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին»:

«Շինկո» ՍՊԸ-ն հրավերով սահմանված հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով վճարել է «900008000474» գանձապետական հաշվին, որը սահմանվել է Գնահատող հանձնաժողովի 30.01.2018թ. թիվ «1» որոշմամբ, հետևաբար հանձնաժողովի այն փաստարկը, որ մասնակցի կողմից հայտի ապահովումը վճարվել է սխալ հաշվեհամարին անհիմն է և չի համապատասխանում իրականությանը: Անհիմն է նաև հանձնաժողովի այն փաստարկը, որ գումարը վճարվել է որպես պայմանագրի ապահովում, քանի որ եթե հանձնաժողովն օբյեկտիվ և մանրամասնորեն ուսումնասիրեր ներկայացված վճարման անդորրագիրը, ապա կտեսներ, որ նպատակ դաշտում նշված է հայտի ապահովում»:

Ընկերությունը հայտնել է, որ արդյունքում ստացվում է, որ Գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում հրավերի տեքստում հաշվեհամարի փոփոխություն կատարելու մասին, սակայն հրավերի տեքստում նշել է այլ հաշվեհամարը, որը չի համապատասխանում 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հաստատված հաշվեհամարին:

Ընկերությունը նշել է, որ եթե մի պահ նույնիսկ ենթադրվի, որ 30.01.2018թ. Գնահատող հանձնաժողովը թիվ «1» որոշումից բացի կայացրել է ևս մեկ այլ որոշում, որի արդյունքում «900008000474» հաշվեհամարը փոխարինել է «900008000466» հաշվեհամարով, ապա դա չի կարող իրավական հետևանքներ առաջացնել, քանի որ այն ընդունվել է օրենքի

խախտմամբ, մասնավորապես՝ խախտվել է Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, համաձայն որի՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

Ամփոփելով, Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովն իր գործողություններով հակասում է իր իսկ կողմից ընդունված որոշմանը, որի արդյունքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամրագրված միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթացի կազմակերպման սկզբունքները:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Ընկերությունը հայտնել է, որ տվյալ պարագայում հանձնաժողովը ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից պետք է ճանաչեր «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ կոնսորցիումին, քանի որ վերջինիս գնային առաջարկները նշված չափաբաժինների մասով ավելի ցածր են քան «Լիլիթ-87» ՍՊԸ-ինը:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

<< քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Ընկերությունը նշել է, որ տվյալ պարագայում «Շինկո» ՍՊԸ-ն շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ և կանխակալ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնկացել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ծածկագրով բաց մրցույթին:

Ներկայացված բողոքով Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով բողոքը բավարարել, այն է՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխելու 16.03.2018թ. N 3 արձանագրության 3.1-րդ կետը և «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ (համատեղությամբ) հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխելու 16.03.2018թ. N 3 արձանագրության 3.2-րդ կետը և «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ (համատեղությամբ) հայտը գնահատել բավարար:

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխելու 16.03.2018թ. N 3 արձանագրության 4-րդ կետը և «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ (համատեղությամբ) ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից

«Շինկո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.03.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով հայտնած դիրքորոշումը:

Ընկերությունը, ի լրումն 22.03.2018թ. բողոքի 26.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին քննվել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/44 բողոքը: Բողոքի քննության ժամանակ պատվիրատուի ներկայացուցչի կողմից

ներկայացված բանավոր առարկությունների, ինչպես նաև նիստը նախագահողի և Ընկերության ներկայացուցչի կողմից տրված հարցերի պատասխանից պարզվել է հետևյալը.

«15.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ հաստատել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ընթացակարգի հրավերի տեքստը, որը 12.01.2018թ. հրապարակվել է տեղեկագրում:

30.01.2018թ-ին գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հրավերի տեքստում կատարվել է փոփոխություն, որի վերաբերյալ հայտարարությունը նույն օրը սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում:

30.01.2018թ-ին գնահատող հանձնաժողովի «2» որոշմամբ հաստատվել է թիվ «1» որոշմանը չհամապատասխանող հրավերի նոր տեքստ, որը համաձայն տեղեկագրում առկա տվյալների հրապարակվել է 12.01.2018թ-ին:

15.01.2018թ-ին գնահատող հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ հաստատված հրավերը, որը 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ փոփոխվել է, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի վերացվել»:

Ընկերությունը հայտնել է, որ արդյունքում ստացվում է, որ հայտերի բացման օրվա դրությամբ նույն ծածկագրով ընթացակարգի համար գոյություն է ունեցել թվով երկու գործող հրավերի տեքստ, ինչը միանշանակ հակասում է գործող օրենսդրության պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել առ այն, որ 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի «2» որոշմամբ հաստատված փոփոխված հրավերի տեքստը, ինչպես պատվիրատուն է նշել, տեղեկագրում հրապարակվել է նույն օրը՝ 30.01.2018թ.-ին, որին հակառակ Ընկերության կողմից ներկայացված Procurement.am կայքից կատարված արտատպումից պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովի 30.01.2018թ. «2» որոշմամբ հաստատված փոփոխված հրավերի տեքստը հրապարակված է եղել արդեն իսկ 12.01.2018թ-ին, ինչը առհասարակ կասկածի տակ է դնում տվյալ փաստաթղթի իրավաչափության և արժանահավատության փաստը:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել, որ «Շինկո» ՍՊԸ-ն, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ-ն և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ն (համատեղությամբ) ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ծածկագրով բաց մրցույթին հայտ ներկայացնելիս առաջնորդվել են 15.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ հաստատված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58 ընթացակարգի հրավերի տեքստով և դրանում 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ «1» որոշմամբ հաստատված և սահմանված կարգով հրապարակված փոփոխությամբ, որը հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ եղել է 30.01.2018թ. հրապարակված միակ և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգին վերաբերվող վերջին փաստաթուղթը:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը խնդրել է թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/44 բողոքով վերջնական որոշում կայացնելիս, բացի բողոքում նշված փաստերից, քննարկման առարկա դարձնել նաև վերը նշված փաստական հանգամանքները:

2. <u>**Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.**</u>

Երևանի քաղաքապետարանը «Շինկո» ՍՊԸ-ի 22.03.2018 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ 27.03.2018թ. թիվ 02/61-6755 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստում, օրենքով սահմանված կարգով 30.01.2018 թվականին կատարված փոփոխությունները նույն օրը հրապարակվել են տեղեկագրում:

Փոփոխված հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ միայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար.

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466>> գանձապետական հաշվին.....»:

Փոփոխված հրավերի 1-ին մասի 10.2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Եթե սույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում 70 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Պատվիրատուն հայտնել է, որ այն դեպքում, երբ սույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, մերժելով «Շինկո» ՍՊԸ-ի հայտը, հիմք է ընդունել այն հանգամանքը, որ վերջինիս կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված մասնակցության հայտի ապահովման անդորրագիրը լրացված է սխալ, այն չի համապատասխանում հրավերի պայմաններին, այն է՝

անդորրագրում նշված գումարը փոխանցվել է 900008000474 հաշվեհամարին, այնինչ փոփոխված հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվեր Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466>> գանձապետական հաշվին.

Շահառու\Beneficiary լրացման դաշտում բացակայում է պատվիրատուի անվանումը, փոխարենը այն լրացվել է հետևյալ կերպ (գնումների մասին օրենքով նախատեսված դեպքում մասնակիցներից պայմանագրի կատարման ապահովում), որը նույնպես որակվել է որպես խախտում:

Անդորրագրում նշված չէ նաև գնման ընթացակարգի ծածկագիրը, որի բացակայության պարագայում հասկանալի չէ, թե որ գնման ընթացակարգի շրջանակներում է իրականացվել տվյալ գումարի փոխանցումը:

«Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18 հունվարի 2002 թվականի N 48 որոշման 14.1-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովման նպատակով սխալ հաշվեհամարին և վերը թվարկված թերություններով պայմանավորված վճարումը չի կարող հիմք հանդիսանալ որևէ գործարքի (մասնակցության հայտի ապահովման) համար և ենթակա էր մերժման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը»:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18 հունվարի 2002 թվականի N 48 որոշման 14.1-րդ կետը՝ «Շինկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման անդորրագիրը չէր կարող համարվել հայտի ապահովում և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մասնակցի հայտը ենթակա էր մերժման:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.03.2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման, ճաքալցման և գրունտային փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ հաստատվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը, որը 12.01.2018թ. հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում, որտեղ նշված է հետևյալը.

• Մրցույթի հրավերի 7.1 կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ միայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

• Մրցույթի հրավերի 10.2 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

3. 30.01.2018թ. մրցույթի հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ հաստատվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը, որը հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում 12.01.2018թ.-ին, որտեղ նշված է հետևյալը.

• Հրավերի 7.1. կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

• Հրավերի 10.2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

4. 30.01.2018թ. Պատվիրատուի կողմից սահմանված կարգով gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հայտարարություն՝ 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշմամբ հրավերի տեքստում փոփոխություններ կատարելու մասին, որտեղ նշվել է, որ գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1

- Հրավերի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով նախատեսվել է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

Փոփոխության նկարագրություն-հրավերում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի և պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին»:

5. Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, Մրցույթի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Շինկո» ՍՊԸ-ն, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ-ն և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ն (կոնսորցիումով):

6. «Շինկո» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացվել է մասնակցության հայտի ապահովում, որը փոխանցվել է «900008000474» գանձապետական հաշվին:

7. Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի (համատեղությամբ) ներկայացրած հայտի, մասնավորապես՝

«Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պայմաններին, այն է՝ հրավերի 7-րդ կետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, սակայն մասնակցի կողմից այն փոխանցվել է որպես պայմանագրի ապահովում և փոխանցվել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

8. Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.2 ենթակետով կայացված որոշմամբ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի (համատեղությամբ) ներկայացրած հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

9. Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Մրցույթի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լիլիթ» ՍՊԸ-ին:

4. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Շինկո» ՍՊԸ-ի 22.03.2018թ. բողոքը, Երևանի քաղաքապետարանի 27.03.2018թ. թիվ 02/61-6755 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է

հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: ***Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝*** տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ ***կանխիկ փողի ձևով:*** Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են գնային առաջարկը և (կամ) ***հայտի ապահովումը*** կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման, ճաքալցման և գրունտային փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով բաց մրցույթ:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ հաստատվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը, որը ***12.01.2018թ. սահմանված կարգով հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում***, որտեղ նշվել է հետևյալը.

• Մրցույթի հրավերի 7.1 կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ միայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

• Մրցույթի հրավերի 10.2 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

30.01.2018թ. մրցույթի հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ հաստատվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը, որը հրապարակվել է gnumner.am պաշտոնական տեղեկագրում 12.01.2018թ.-ին, որտեղ նշվել է հետևյալը.

• Հրավերի 7.1. կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

• Հրավերի 10.2 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

30.01.2018թ. Պատվիրատուի կողմից սահմանված կարգով ***gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հայտարարություն՝ 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշմամբ հրավերի տեքստում փոփոխություններ կատարելու մասին***, որտեղ նշվել է, որ գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1

- Հրավերի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով նախատեսվել է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված «900015211429» գանձապետական հաշվին:

Փոփոխության նկարագրություն-հրավերում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի և պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին»:

Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, Մրցույթի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Շինկո» ՍՊԸ-ն, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ-ն և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ն (կոնսորցիումով):

«Շինկո» ՍՊԸ-ն հրավերով սահմանված հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով փոխանցել է «900008000474» գանձապետական հաշվին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի (համատեղությամբ) ներկայացրած հայտի, մասնավորապես՝ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պայմաններին, այն է՝ հրավերի 7-րդ կետի համաձայն՝ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը

պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, սակայն մասնակցի կողմից այն փոխանցվել է որպես պայմանագրի ապահովում և փոխանցվել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.2 ենթակետով կայացված որոշմամբ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ի (համատեղությամբ) ներկայացրած հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Մրցույթի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լիլիթ» ՍՊԸ-ին:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստերը, արձանագրում եմ, որ 30.01.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 1 որոշմամբ հաստատված և սահմանված կարգով ***30.01.2018թ. gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակված հրավերի փոփոխությունը հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ եղել է հրապարակված միակ և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58» ծածկագրով ընթացակարգին վերաբերվող վերջին փաստաթուղթը***, որտեղ սահմանվել է, որ ***կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի և պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին»***, ուստի գտնում եմ, որ ***«Շինկո» ՍՊԸ-ն***, առաջնորդվելով 30.01.2018թ. gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարկված Մրցույթի հրավերում կատարված վերջին փոփոխությամբ և ***հայտի ապահովումը*** կանխիկ փողի ձևով ***փոխանցելով «900008000474» գանձապետական հաշվին***, որը սահմանված է եղել հրավերի փոփոխությամբ գործել է իրավաչափ:

Այսպիսով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում*** բացակայում են գնային առաջարկը և (կամ) ***հայտի ապահովումը*** կամ եթե դրանք ***ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Նման պայմաններում գտնում եմ, գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, ուստի սույն մասով «Շինկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Շինկո» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին, այն է՝ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ին (համատեղությամբ) ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Հաշվի առնելով վերը նշված հոդվածների դրույթները, գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից 27.03.2018թ. թիվ 02/61-6755 գրությամբ ներկայացված այն դիտարկմանը, որ «Շինկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման անդորրագրում շահառուի\Beneficiary լրացման դաշտում բացակայում է պատվիրատուի

անվանումը, փոխարենը այն լրացվել է՝ գնումների մասին օրենքով նախատեսված դեպքում մասնակիցներից պայմանագրի կատարման ապահովում, որը նույնպես որակվել է որպես խախտում, ինչպես նաև անդորրագրում նշված չէ նաև գնման ընթացակարգի ծածկագիրը, որի բացակայության պարագայում հասկանալի չէ, թե որ գնման ընթացակարգի շրջանակներում է իրականացվել տվյալ գումարի փոխանցումը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով կայացված որոշմամբ «Շինկո» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք է հանդիսացել միայն այն փաստը, որ հայտի ապահովումը վերջինս փոխանցել է սխալ հաշվեհամարին, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից վերը նշված գրությամբ թվարկված այլ խախտումները առարկայազուրկ են և չեն կարող քննարկման հիմք հանդիսանալ «ԳԲԽ-ԱՄ-2018/44» բողոքի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Շինկո» ՍՊԸ-ի կողմից 22.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխելու 16.03.2018թ. N 3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով կայացված որոշումը և «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ (համատեղությամբ) հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխելու 16.03.2018թ. N 3 արձանագրության 3-րդ կետի 3.2 ենթակետով կայացված որոշումը և «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ (համատեղությամբ) հայտը գնահատել բավարար:

1. Բողոքի պահանջը՝ «Շինկո» ՍՊԸ, Ստրոիտելնայա Կոմպանիա «Գարանտ» ՍՊԸ և «Էլիտստրոյ» ՍՊԸ-ին (համատեղությամբ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ